- Բյուջեով հաստատված գումարը ամբողջ ժամանակաշրջանի համար կազմում է 36,104,633 ՀՀ դրամ: Փաստացի կատարված և հատուցված ծախսերը կազմում են՝ 32,105,000 ՀՀ դրամ:
- Մեր կողմից ստուգված ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 32,105,000 ՀՀ դրամ, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Ծախսերի ծածկույթի ընդհանուր գործակիցը կազմում է 100 %:
- Միջոցները օգտագործվել են նպատակային և արդյունավետ:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպության միջև գործընկերային պայմանագրային պարտավորությունները պահպանվել են:

2022 թվականի հունվարի 01-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված

| *ՀՀ դրամով* | Փաստացի ծախսերի գումարը | Ստուգված ծախսերի գումարը | Մասնաբաժինը ծախսերում |
|---|---|---|---|
| 1. Վարչական անձնակազմ | 4,624,285 | 4,624,285 | 100% |
| 2. Ծրագրի իրականացում | 15,607,800 | 15,607,800 | 100% |
| 3. Այլ ծախսեր | 9,963,042 | 9,963,042 | 100% |
| 4. Գործառնական ծախսեր | 1,863,873 | 1,863,873 | 100% |
| 5. Բուժծառայություններ և այլն | 46,000 | 46,000 | 100% |
| Ընդամենը | **32,105,000** | **32,105,000** | 100% |

# 4. ԾՐԱԳՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

«Ամերիաբանկ» ՓԲԸ 1570005312180300 ՀՀ դրամ.

Մենք ստուգել ենք ընկերության բանկային հաշվի բոլոր դեբետային և կրեդիտային գրանցումները՝ համեմատելով դրանք բանկային քաղվածքների հետ: Անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Սույն ծրագրի շրջանակում «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպությունը իրեն սպասարկող կամ այլ բանկերում առանձին սպասարկման հաշվարկային հաշիվ չի բացել, սական այն հաշվապահական հաշվառման վարելուն չի խոչընդոտել:

Կանխիկ գործարքները հիմնավորված էին դրամարկղային ելքի փաստաթղթերով:

Ծախսերի և մուտքերի նախնական փաստաթղթերի ստուգման արդյունքում որևէ խախտում չենք հայտնաբերել:

# ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԱՅՍՕՐ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հաշվետու ժամանակ՝**

01 Հունվար 2022 – 31 Դեկտեմբեր 2022

**ԵՐԵՎԱՆ 2023**

# Բովանդակություն


- Անկախ աուդիտորի եզրակացություն 3
- Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների հոդվածներ 6
- Ընդհանուր տեղեկություններ դրամաշնորհի մասին 9
- Այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրեր 10
- Ներդրված ընթացակարգեր և փաստեր 12
  1. Իրականացման պայմաններ 13
  2. Հաշվապահական քաղաքականություն 14
  3. Մեկնաբանություններ 16
  4. Նախագծի բանկային և դրամարկղային մնացորդները 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

# Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Տիկին Գյուլնարա Շահինյանին
Դեմոկրատիան Այսօր
Հասարակական Կազմակերպություն

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպության 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ՀԿ-ների մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, ինչպես նաև հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը: Նշված ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպության ղեկավարության կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, 2021 թվականի պետական «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառման ֆինանսական հաշվետվության դրույթները:

Մեր կարծիքով ՀԿ-ների մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, ինչպես նաև հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ճշմարիտ են ներկայացնում 01/01/2022թ.-ից 31/12/2022թ.-ը ընկած հաշվետու ժամանակահատվածի ֆինանսական արդյունքները: Դրամաշնորհի միջոցներն օգտագործվել են բացառապես Ծրագրի նպատակների իրագործման համար:

*Կարծիքի հիմքերը*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ծրագրի Գործընկերից՝ համաձայն վարքագծի այն պահանջների, որոնք կարևոր են Սուբսիդիայի պայմանագրի համաձայն ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար, և մենք կատարել ենք վարքագծի կանոններով մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հաշվապահական հաշվառման հիմքի շեշտադրումը և Բաշխման ու օգտագործման սահմանափակումները*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են օժանդակելու Կազմակերպությանը՝ վերը նշված Սուբսիդիայի պայմանագրի ֆինանսական հաշվետվությունների դրույթներին համապատասխան: Արդյունքում, ֆինանսական հաշվետվությունները կարող են պիտանի չլինել այլ նպատակի համար: Մեր զեկույցը նախատեսված է բացառապես Կազմակերպության և Գործադիր մարմնի համար և չպետք է փոխանցվի կամ օգտագործվի այլ երրորդ կողմի: Մեր եզրակացությունը չի վերափոխվել տվյալ առումով:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Սուբսիդիայի պայմանագրի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, և այնպիսի ներքին վերահսկողությունների համար, որոնք ըստ ղեկավարության, անհրաժեշտ են ապահովելու էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ լինի դա խարդախության թե սխալի պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պետք է գնահատի կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը՝ բացահայտելու, ըստ անհրաժեշտության, այն հանգամանքները, որոնք վերաբերում են անընդհատ գործելուն, և կիրառի հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը, քանի դեռ ղեկավարությունը կամ մտադիր չէ լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել գործունեությունը, կամ դրա իրականացման այլընտրանք չունի:

Կառավարման համար պատասխանատուները նաև պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ պահելու համար, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում,

միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյո՞ք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ՝ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

Մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

“24” Մայիսի 2023թ.

«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Ռուզաննա Արզումանյան

Խմբի ղեկավար

Աուդիտոր
Կարինե Գալստյան

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ 24-րդ ՀՈԴՎԱԾԻՑ ԲԽՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր*

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը՝ | Թրաֆիկինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց, սոցիալ հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցելու ծրագիր; |
| Վայրը՝ | Երևան |
| Կարգավիճակը՝ | Ավարտված |
| Նպատակը՝ | Թրաֆիկինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց, սոցիալ հոգեբանական վերականգնում: |

*Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ*

| | |
|---|---|
| Դրամական միջոցներ՝ | 32,105,000 ՀՀ դրամ |
| Ստացման աղբյուրը՝ | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: |

*Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝*

| | |
|---|---|
| Դրամական միջոցներ՝ | 32,105,000 ՀՀ դրամ: |

N 6 Հավելված
« 08 »«02» 2022թ.կնքված
N ԴՏՊ-1141-11010/22 պայմանագրի

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից «N ԴՏՊ-1141-11010/21 Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառման շրջանակներում <<Դեմոկրատիան այսօր>> գործընկեր հասարակական կազմակերպություն **դեկտեմբեր 2022թ.** ամսում հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

| | Ծախսային հոդվածներ | | Հաստատված նախահաշվի գումարը | Այլ միջոցներից նախատեսված | Հաշվետու ժամանակահատվածում | | | Տարեսկզբից աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը** | ծածկագիրը | | | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | Այլ աղբյուրների անվանումները |
| | 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ | x | 36104,63 | 0,0 | 0,0 | 3470,8 | 0,0 | 0,0 | 32105,8 | 0,0 | |
| 2 | Աշխատողների աշխատավարձեր | 4111 | 21102,50 | 0,0 | 0,0 | 1835,3 | 0,0 | 0,0 | 20232,1 | 0,0 | |
| 3 | Կոմունալ ծառայություններէներգետիկ | 4212 | 1035,00 | 0,0 | 0,0 | 289,6 | 0,0 | 0,0 | 847,2 | 0,0 | |
| 4 | Կոմունալ ծառայություններ ջուր | 4213 | 117,00 | 0,0 | 0,0 | 7,0 | 0,0 | 0,0 | 63,5 | 0,0 | |
| 5 | Կապի ծառայություններ | 4214 | 252,00 | 0,0 | 0,0 | 24,9 | 0,0 | 0,0 | 250,4 | 0,0 | |
| 6 | Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 7552,07 | 0,0 | 0,0 | 642,0 | 0,0 | 0,0 | 7535,0 | 0,0 | |
| 7 | Թարգմանչական ծառայություն | 4231 | 100,00 | 0,0 | 0,0 | 30,0 | 0,0 | 0,0 | 30,0 | 0,0 | |
| 8 | Տեղեկատվական նյութերի դիզայն | 4232 | 30,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 30,0 | 0,0 | |
| 9 | Տպագրական ծառայություն | 4234 | 155,00 | 0,0 | 0,0 | 7,5 | 0,0 | 0,0 | 82,5 | 0,0 | |
| 10 | Աուդիտորական ծառայություն | 4235 | 500,00 | 0,0 | 0,0 | 500,0 | 0,0 | 0,0 | 500,0 | 0,0 | |
| 11 | Իրավաբանական ծառայություն | 4235 | 800,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 225,0 | 0,0 | |
| 12 | Դասընթացների կազմակերպում, | 4237 | 400,00 | 0,0 | 0,0 | 40,0 | 0,0 | 0,0 | 400,0 | 0,0 | |
| 13 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 115,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 42,3 | 0,0 | |
| 14 | Ավտոմեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 92,00 | 0,0 | 0,0 | 16,0 | 0,0 | 0,0 | 79,0 | 0,0 | |
| 15 | Սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 34,50 | 0,0 | 0,0 | -9,0 | 0,0 | 0,0 | 34,5 | 0,0 | |
| 16 | Գրասենյակային պիտույքներ | 4261 | 49,53 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 11,1 | 0,0 | |
| 17 | Հագուստ և համազգեստ | 4261 | 407,10 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 185,8 | 0,0 | |
| 18 | Տրանսպորտային նյութեր վառելիք | 4264 | 287,50 | 0,0 | 0,0 | 21,9 | 0,0 | 0,0 | 266,2 | 0,0 | |
| 19 | Առողջապահական և լաբորատոր նյութեր | 4266 | 115,00 | 0,0 | 0,0 | -10,7 | 0,0 | 0,0 | 115,0 | 0,0 | |
| 20 | Սնունդ | 4267 | 1814,93 | 0,0 | 0,0 | 76,3 | 0,0 | 0,0 | 977,7 | 0,0 | |
| 21 | Կենցաղային ապրանքներ | 4267 | 391,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 152,5 | 0,0 | |
| 22 | Շահառուների բուժ սպասարկում | 4712 | 356,50 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 35,0 | 0,0 | |
| 23 | Շահառուների մասնագիտական վերապատրաստում | 4712 | 375,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 24 | Պարտադիր վճարներ | 4823 | 23,00 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 11,0 | 0,0 | |

Դեմոկրատիան այսօր ՀԿ նախագահ _______________ Գ. Շահինյան

Գլխավոր հաշվապահ _______________ Է. Սարգսյան

Կազմակերպության անվանումը: «Դեմոկրատիան այսօր» ՀԿ

Ծրագրի անվանումը: «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ»

Ծրագրի ժամանակահատված՝ 1-ը հունվար 2022 - 31-ը դեկտեմբեր 2022

Բյուջեի նկարագրություն

| | | Ընդհանուր բյուջե | ՀՀ աշխ. և սոց. Հարցերի նախար. | Ծախսեր հունվար | Ծախսեր փետրվար | Ծախսեր մարտ | Ծախսեր ապրիլ | Ծախսեր մայիս | Ծախսեր հունիս | Ծախսեր հուլիս | Ծախսեր օգոստոս | Ծախսեր սեպտեմբեր | Ծախսեր հոկտեմբեր | Ծախսեր նոյեմբեր | Ծախսեր դեկտեմբեր | ԱՄԲՈՂՋԸ | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Project staff** | | | | | | | | | | | | | | | | |
| 1,1 | Ծրագրի համակարգող | | 3 105 000 | 38 571 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 270 000 | 3 008 571 | 96 429 |
| 1,2 | Ծրագրի հաշվապահ | | 1 667 500 | 20 714 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 145 000 | 1 615 714 | 51 786 |
| | ***Ընդամենը ծրագրային անձնակազմ*** | | ***4 772 500*** | ***59 285*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***415 000*** | ***4 624 285*** | ***148 215*** |
| 2 | **Սպասարկող անձնակազմ** | | | | | | | | | | | | | | | | |
| 2,1 | Ծրագրի գործակալ | | 4 140 000 | 51 428 | 360 000 | 360 000 | 360 000 | 360 000 | 360 000 | 360 000 | 360 000 | 377 145 | 360 000 | 360 000 | 360 000 | 4 028 573 | 111 427 |
| 2,2 | Հոգեբան | | 2 070 000 | 25 714 | 180 000 | 180 000 | 180 000 | 180 000 | 180 000 | 180 000 | 180 000 | 164 348 | 180 000 | 180 000 | 180 000 | 1 990 062 | 79 938 |
| 2,3 | Սոց աշխատող | | 1 150 000 | 23 562 | 85 734 | 103 950 | 100 188 | 109 296 | 85 932 | 109 494 | 91 080 | 110 088 | 96 426 | 91 080 | 91 080 | 1 097 910 | 52 090 |
| 2,4 | Սոց աշխատող | | 1 150 000 | 18 216 | 81 972 | 91 080 | 91 080 | 105 534 | 91 080 | 93 654 | 91 080 | 87 318 | 100 188 | 85 734 | 100 188 | 1 037 124 | 112 876 |
| 2,5 | Սոց աշխատող | | 1 150 000 | 16 632 | 87 318 | 93 852 | 91 080 | 85 734 | 104 148 | 91 080 | 100 188 | 94 842 | 85 734 | 96 426 | 91 080 | 1 038 114 | 111 886 |
| 2,6 | Պահակ | | 1 150 000 | 31 284 | 91 080 | 104 346 | - | 0 | - | - | 102 960 | 109 296 | 102 960 | 108 306 | 102 960 | 753 192 | 396 808 |
| 2,7 | Պահակ | | 1 150 000 | 42 966 | 72 468 | 99 198 | 129 096 | 171 072 | 134 244 | 151 074 | 117 414 | 102 960 | 112 068 | 99 000 | 106 722 | 1 338 282 | -188 282 |
| 2,8 | Պահակ | | 1 150 000 | - | 106 920 | 114 444 | 147 312 | 149 688 | 80 784 | 108 306 | 93 654 | 109 692 | 106 920 | 97 614 | 108 306 | 1 223 640 | -73 640 |
| 2,9 | Տնտեսուհի | | 1 380 000 | 17 143 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 93 913 | 120 000 | 120 000 | 120 000 | 120 000 | 1 311 056 | 68 944 |
| 2.11 | Վարորդ | | 1 840 000 | 22 857 | 160 000 | 160 000 | 160 000 | 160 000 | 160 000 | 157 714 | 169 276 | 160 000 | 160 000 | 160 000 | 160 000 | 1 789 847 | 50 153 |
| | ***Ընդամենը*** | | ***16 330 000*** | ***249 802*** | ***1 345 492*** | ***1 426 870*** | ***1 378 756*** | ***1 441 324*** | ***1 316 188*** | ***1 371 322*** | ***1 399 565*** | ***1 435 689*** | ***1 424 296*** | ***1 398 160*** | ***1 420 336*** | ***15 607 800*** | ***722 200*** |
| | **Ընդամենը անձնակազմ** | | **21 102 500** | **309 087** | **1 760 492** | **1 841 870** | **1 793 756** | **1 856 324** | **1 731 188** | **1 786 322** | **1 814 565** | **1 850 689** | **1 839 296** | **1 813 160** | **1 835 336** | **20 232 085** | **870 415** |
| 3 | **Այլ ծախսեր** | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Գազի հոսանքի ծախս | | 1 035 000 | - | 50 000 | 156 650 | 117 030 | 73 000 | 30 000 | 22 488 | 25 904 | 25 500 | 22 130 | 34 650 | 289 570 | 846 922 | 188 078 |
| 3,1 | Ջրի ծախս | | 117 000 | | - | 8 250 | 9 620 | 11 000 | 9 000 | 5 256 | 3 408 | 3 300 | 3 315 | 3 410 | 7 000 | 63 559 | 53 441 |
| 3,2 | քաղաքային, բջջային հեռախոսի, ինտերնետի ծախս | | 252 000 | - | 18 100 | 19 666 | 18 461 | 25 446 | 23 395 | 23 683 | 23 770 | 24 284 | 23 744 | 24 769 | 24 886 | 250 204 | 1 796 |
| 3,3 | Կացարանի առանձնատան, ավտոմեքենայի, գրասենյակի վարձակալություն 11.5 ամիս հաշվակով | | 7 552 067 | 12 857 | 642 000 | 642 000 | 642 000 | 642 000 | 642 000 | 642 000 | 642 000 | 802 000 | 942 000 | 642 000 | 642 000 | 7 534 857 | 17 210 |
| 3,4 | Թարգմանչական ծառայություն | | 100 000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 30 000 | 30 000 | 70 000 |
| 3,5 | Տեղեկատվական նյութերի դիզայն | | 30 000 | - | - | - | 30 000 | - | - | - | - | - | - | - | - | 30 000 | 0 |
| 3,6 | Տպագրական ծառայություն | | 155 000 | - | - | - | 75 000 | - | - | - | - | - | - | - | 7 500 | 82 500 | 72 500 |
| 3,7 | Աուդիտորական ծառայություն | | 500 000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 500 000 | 500 000 | 0 |
| 3,8 | Իրավաբանական ծառայություն | | 800 000 | - | - | 225 000 | - | - | - | - | - | - | - | - | - | 225 000 | 575 000 |
| 3,9 | Դասընթացների կազմակերպում, | | 400 000 | - | - | 80 000 | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 | 40 000 | - | 40 000 | 40 000 | 400 000 | 0 |
| | ***Ընդամենը*** | | ***10 941 067*** | ***12 857*** | ***710 100*** | ***1 131 566*** | ***932 111*** | ***791 446*** | ***744 395*** | ***733 427*** | ***735 082*** | ***895 084*** | ***991 189*** | ***744 829*** | ***1 540 956*** | ***9 963 042*** | ***978 025*** |
| 4 | **Գործառնական ծախսեր** | | | | | | | | | | | | | | | | |
| 4,1 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | | 115 000 | 20 439 | - | - | - | - | - | 14 557 | - | - | 7 462 | - | - | 42 458 | 72 542 |
| 4,2 | Ավտոմեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում | | 92 000 | - | - | 16 000 | 16 000 | - | - | - | 16 000 | - | - | 15 000 | 16 000 | 79 000 | 13 000 |
| 4,3 | Սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | | 34 500 | - | - | - | 5 372 | 21 978 | 4 150 | - | - | - | 3 000 | - | - | 34 500 | 0 |
| 4,4 | Գրասենյակային պիտույքներ | | 49 536 | - | 10 450 | - | 600 | - | - | - | - | - | - | - | - | 11 050 | 38 486 |
| 4,5 | Հագուստ և համազգեստ | | 407 100 | - | 48 700 | - | 30 430 | - | 26 620 | - | - | - | 59 000 | 21 100 | - | 185 850 | 221 250 |
| 4,6 | Տրանսպորտային նյութեր վառելիք | | 287 500 | 3 500 | 18 500 | 24 300 | 34 649 | 25 270 | 33 800 | 21 240 | 11 600 | 21 000 | 21 700 | 28 920 | 21 900 | 266 379 | 21 121 |
| 4,7 | Առողջապահական և լաբորատոր նյութեր | | 115 000 | - | 4 070 | 73 451 | 7 890 | - | 4 200 | - | 15 000 | - | 9 800 | - | - | 114 411 | 589 |
| 4,8 | ՄՆՈՒՆԴ | | 1 814 930 | 17 650 | 66 081 | 141 195 | 149 667 | 95 977 | 87 646 | 103 289 | 52 271 | 56 819 | 67 114 | 63 713 | 76 313 | 977 735 | 837 195 |
| 4,9 | Կենցաղային ապրանքներ | | 391 000 | - | - | 26 580 | - | 43 200 | - | 41 290 | - | 14 540 | 26 880 | - | - | 152 490 | 238 510 |
| | ***Ընդամենը*** | | ***3 306 566*** | ***41 589*** | ***147 801*** | ***281 526*** | ***244 608*** | ***186 425*** | ***156 416*** | ***180 376*** | ***94 871*** | ***92 359*** | ***194 956*** | ***128 733*** | ***114 213*** | ***1 863 873*** | ***1 442 693*** |
| 5 | **Բուժծառայություններ և այլն** | | | | | | | | | | | | | | | | |
| 5,1 | Շահառուների բուժ սպասարկում | | 356 500 | - | - | 35 000 | - | - | - | - | - | - | - | - | - | 35 000 | 321 500 |
| 5,2 | Շահառուների մասնագիտական վերապատրաստում | | 375 000 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 0 | 375 000 |
| 5,3 | Պարտադիր վճարներ | | 23 000 | - | - | - | 11 000 | - | - | - | - | - | - | - | - | 11 000 | 12 000 |
| | ***Ընդամենը*** | | ***754 500*** | - | - | ***35 000*** | ***11 000*** | - | - | - | - | - | - | - | - | ***46 000*** | ***708 500*** |
| | **Ամբողջ գումար** | - | 36 104 633 | 363 533 | 2 618 393 | 3 289 962 | 2 981 475 | 2 834 195 | 2 631 999 | 2 700 125 | 2 644 518 | 2 838 132 | 3 025 441 | 2 686 722 | 3 490 505 | 32 105 000 | 3 999 633 |
| | | | | | | | | | | | | | | | | | |
| | Փոխանցումներ Պետ. Բյուջեից | | | | | | | | | | | | | | | **32 105 000** | |
| | | | | | | | | | | | | | | | | | |
| | Մնացորդը ժամանակաշրջանի վերջում | | | | | | | | | | | | | | | - | |

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄԱՍԻՆ

**Նախագծի ընդհանուր նպատակը**

Նախագծի ընդհանուր նպատակն է աջակցել թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վիճակի վերականգնողական միջոցառումների իրականացման միջոցով:

**Ծրագրի Նպատակները**

Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ

Համաձայն 08/02/2022 թվականի Թիվ 1141-11010/22 Պայմանագրի հաստատված ամբողջական բյուջեն կազմում է 36,104,633 ՀՀ դրամ: Սակայն 2022 թվականի ընթացքում առկա զոհերի համար կատարված և պայմանագրով սահմանված կարգով մատուցված ծառայությունների փաստացի գումարը կազմում է 32,105,000 ՀՀ դրամ:

ՀՀ պետական բյուջեի միջոցներից 2022 թվականի ընթացքում «Դեմոկրատիան Այսօր» ՀԿ-ին հատկացվել է 32,105,000 ՀՀ դրամ: Արդյունքում «Դեմոկրատիան Այսօր» ՀԿ-ի կողմից Թիվ 1141-11010/22 Պայմանագրով ՀՀ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացված և հաստատված «Հանձնման-Ընդունման» ակտերով ֆինանսական աջակցության գումարները ամբողջությամբ վճարվել են: «Դեմոկրատիան Այսօր» ՀԿ-ին և «ՀՀ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարությունը» 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխադարձ պարտավորություններ չունեն:

# ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | Վայրը | Նպատակը | Կարգավիճակը | Դրամական միջոցներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | NED «Քաղաքացիների ներգրավվածությունը հակամարտությունների ազդեցության տակ գտնվող համայնքներում» | Տավուշ-Արցախ | Ծրագիրը նպատակ ունի հակամարտության ազդեցությունն իրենց վրա կրող համայնքների երիտասարդների կարողությունների զարգացումը նպաստելու խաղաղ գործընթացին, ինչպես նաև կապեր հաստատել Արցախի և ՀՀ Տավուշի մարզերի համայնքների միջև | Ավարտված | 9,933,000 |
| 2 | NED «Քաղաքացիների ներգրավվածությունը հակամարտությունների ազդեցության տակ գտնվող համայնքներում» Քաղաքացիների ներգրավվածությունը հակամարտությունների ազդեցության տակ գտնվող համայնքներում | Տավուշ-Արցախ | Ծրագիրը նպատակ ունի հակամարտության ազդեցությունն իրենց վրա կրող համայնքների երիտասարդների կարողությունների զարգացումը նպաստելու խաղաղ գործընթացին, ինչպես նաև կապեր հաստատել Արցախի և ՀՀ Տավուշի մարզերի համայնքների միջև | Ընթացքի մեջ | 11,957,097 |
| 3 | «CEDAW-ի ստվերային զեկույցի պատրաստում | Արմավիրի մարզ, Շիրակի մարզ, Լոռու մարզ | Ստվերային զեկույցի պատրաստում | Ավարտված | 506,941 |
| 4 | «Կանանց ընդհանուր ապագան ժամանակակից աշխարհում» միջազգային կոնֆերանս | Երևան | Նպատակ՝ բարձրացնել կանանց առանցքային դերը խաղաղության կերտման և պահպանման գործում և աջակցել կին խաղաղարարներին աշխարհի բազմաթիվ հակամարտությունների գոտիներում | Ավարտված | 1,119,218 |
| 5 | «Թրաֆիկինգի դեմ պայքարը Հայաստանում. Իրազեկության բարձրացման գործողություններ» | Երևան, Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ, Շիրակի մարզ, Լոռու մարզ | Նպաստել Հայաստանում թրաֆիկինգի կանխարգելմանը՝ իրազեկման արշավների միջոցով | Ավարտված | 6,128,250 |
| 6 | «Երիտասարդ կանանց մարդու իրավունքների և խաղաղության միջազգային մրցանակաբաշխություն» | Երևան | Նպատակ՝ նպաստել խաղաղություն կառուցող կանանց նոր սերնդի ներկայացուցիչների ի հայտ գալուն, իսկ պարգևի նպատակն է ճանաչել նրանց ավանդը խաղաղության կառուցման գործում, ինչպես նաև խրախուսել և աջակցել նրանց՝ պատասխանատվություն զգալու իրենց համայնքների և այն մեծ աշխարհի նկատմամբ, որտեղ նրանք ապրում են: | Ընթացքի մեջ | 6,000,000 |
| 7 | «Հայ երիտասարդ մասնագետները պայքարում են մարդկանց թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի դեմ» (Հայաստանում Կանանց Հիմնադրամ) | Երևան | Նպատակ՝ մասնակիցներին տրամադրել համալիր գիտելիքներ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ | Ավարտված | 2,705,000 |

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | Վայրը | Նպատակը | Կարգավիճակը | Դրամական միջոցներ |
|---|---|---|---|---|---|
| 8 | «Հայ երիտասարդ մասնագետները պայքարում են մարդկանց թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի դեմ» (Հայաստանում Կանանց Հիմնադրամ) | Երևան | Նպատակ՝ մասնակիցներին տրամադրել համալիր գիտելիքներ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ | Ընթացքի մեջ | 2,434,500 |
| 9 | Կանանց ընդհանուր ապագան ժամանակակից աշխարհում միջազգային կոնֆերանս | Երևան | Նպատակ՝ բարձրացնել կանանց առանցքային դերը խաղաղության կերտման և պահպանման գործում և աջակցել կին խաղաղարարներին աշխարհի բազմաթիվ հակամարտությունների գոտիներում | Ավարտված | 1,934,693 |
| 10 | «Առանց կանանց չկա խաղաղություն և անվտանգություն | Երևան | Նպատակ՝ Ծրագրի հիմնական նպատակն է փոխել վերաբերմունքը խաղաղության և ժողովրդավարության գործընթացներում կանանց մասնակցության նկատմամբ՝ ներդրումներ կատարելով ԿԽԱ օրակարգի վերաբերյալ գիտելիքների բարձրացմանը, ինչպես նաև ներդրում կատարել Հայաստանում ավելի ուժեղ ԿԽԱ օրակարգի մշակմանը | Ընթացքի մեջ | 7,723,300 |
| 11 | «Պրոֆեսիոնալ կանայք պատերազմի և խաղաղության առաջնագծում» | Երևան | Նպատակ՝ Ծրագիրը նպատակ ունի հետազոտության արդյունքների հիման վրա մշակել առաջարկություններ կանանց, իրավապաշտպանների և առաջնագծի աշխատողների պաշտպանության համար | Ավարտված | 2,340,000 |
| 12 | «Կարողությունների զարգացման ծրագիր» | Երևան | «Դեմոկրատիան այսօր» ՀԿ աշխատակիցների կարողությունների զարգացում տարբեր կրթական ծրագրերի միջոցով | Ավարտված | 3,843,000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | | *56,624,999 ՀՀ ԴՐԱՄ* | | |

# ՆԵՐԴՐՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ-ն հաշվառված է Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների Պալատում որպես աուդիտորական կազմակերպություն (ՀԳԳՀ՝ Թիվ 1 20 0333): Աուդիտորները, որոնք ներգրավված են սույն աշխատանքները իրականացնելու համար ստեղծված աշխատանքային խմբում նույնպես համարվում են Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների Պալատում հաշվառվող աուդիտորներ:

«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ-ի հետ կնքված Պայմանագրով սահմանում են այն սկզբունքներն ու պարտավորությունները, որոնց համաձայն աուդիտորական ընկերությունը իրականացրել է ծրագրի աուդիտը:

Պայմանագրով նախատեսված սկզբունքներն ու պարտավորությունները իրականացվել են Պայմանագրի դրույթներին և պահանջներին համապատասխան: Աուդիտորական աշխատանքը իրականացվել է ծրագրի Գործընկերոջ («Դեմոկրատիան Այսօր» ՀԿ) գրասենյակում, ՀՀ, քաղաք Երևան, Թումանյան 40/6 հասցեում:

Հաշվապահական հաշվառման և ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ մեր դիտարկումները քննարկվել է աուդիտի ընթացքում, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկայնությանը վերաբերող բոլոր էական մանրամասները ներկայացվել է Ղեկավարությանը: Ներկայացվել են առաջարկություններ, թե ինչպես կարող են դրանց թույլ կողմերը վերացվել և վերահսկողությունը բարելավվել:

## 1. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մենք մեր աշխատանքները սկսել ենք 2023 թ.-ի հունվարի 10-ին՝ ունենալով հետևյալ փաստաթղթերը.

- Ֆինանսական հաշվետվություններ (աճողական),
- Հայաստանի Հանրապետության հաշվապահական և հարկային օրենսդրություններ,
- Նամակ-պարտավորագիրը,
- Դրամաշնորհի պայմանագիրը,
- Աուդիտի պայմանագիր,

Հետևյալ փաստաթղթերը մեզ համար հասանելի են եղել.

- Բյուջետավորված ծախսերի ժամանակացույցը և եկամտի աղբյուրները,
- Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է եկամուտները, ծախսերը և Ծրագրերի ֆոնդերի մնացորդը և դրամական միջոցների կարգավիճակը,
- Գնումների սկզբնական փաստաթղթեր,
- Վճարման փաստաթղթային փաթեթները,
- Ծախսերի կատարման ժամանակացույցերը,
- Բանկային հաշիվների քաղվածքներ:

Ծրագրի իրականացնողը մեզ տրամադրել է Ֆինանսական հաշվետվությունը՝ ներառյալ հաշվապահական գրանցամատյանները և դրանց հետ կապակցված գրանցումները (գրառումները) և փաստաթղթերը: Մենք ստացել ենք նաև աուդիտի նպատակների համար անհրաժեշտ բոլոր այլ տեղեկությունները և բացատրությունները:

Ծրագրի իրականացնողը պատրաստել է հաշվապահական գրանցամատյանները, որոնք ունեն առանձին հաշվապահական հաշիվ բյուջետավորված յուրաքանչյուր հոդվածի համար: Յուրաքանչյուր գործարք գրանցվել է ճիշտ՝ համապատասխան հաշվապահական հաշվի ներքո:

# 2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը չի հետապնդում ցանկացած ձևով շահույթի ստացում: Կազմակերպությունը գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իր սեփական կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի:

## 1.1 Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում

Ֆինանսական հաշվետվությունը (Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը) ներառում է Ծրագրի եկամուտները/մուտքերը, ծախսերը/վճարները և Ծրագրի միջոցների մնացորդը և դրամական միջոցների կարգավիճակը: Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են՝ հիմք ընդունելով դրամարկղային հիմունքով հաշվառումն ըստ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ): Դրամարկղային հիմունքով ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը թողարկված է Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների խորհրդի կողմից:

*Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվության պատրաստման ժամանակ կիրառված հիմնական հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ստորև.*

## 1.2 Դրամարկղային հիմունքով հաշվառում

Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է օգտագործելով դրամարկղային հիմունքով հաշվառումը:

Դրամարկղային հիմունքը նշանակում է հաշվառման այն մոտեցումը, որի համաձայն գործարքները և այլ իրադարձությունները ճանաչվում են միայն այն դեպքում, երբ ստացվում կամ վճարվում են դրամական միջոցները կամ դրանց համարժեքները:

Դրամական միջոցների մուտքերի և ելքերի հիմքերով կազմված ֆինանսական հաշվետվությունը տեղեկատվություն է տրամադրում հաշվետու ժամանակահատվածում առաջացած դրամական միջոցների աղբյուրների, դրամական միջոցների օգտագործման նպատակի և հաշվետու ժամանակաշրջանի սկզբում ու վերջում դրամական միջոցների մնացորդների մասին:

### 1.3 Ներկայացում և Ֆունցիոնալ արժույթ

Կազմակերպության հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվության ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը հայկական դրամն է (դրամ):

Դրամաշնորհը հատկացվել է հայկական դրամով:

# 3. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի մեկնարկել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում: «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպության կողմից իրականացվող տարեկան ծրագիրը ֆինանսավորվում է Պետության կողմից դրամաշնորհի տեսքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց հասարակության մեջ սոցիալական վերաինտեգրմանը, սոցիալական անպաշտպանվածության հանդեպ վախերի հաղթահարումը, վերադարձ բնականոն կյանքին, և կարևոր գործառույթներից մեկն է համարվում օժանդակությունը սեռական բռնության ենթարկված կանանց և աղջիկների թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու կրկնազոհացման վտանգից զերց պահելու առաքելությունը:

- Ծրագրի միջոցների մնացորդը ծրագրի սկզբին կազմել է 0 ՀՀ դրամ
- Ծրագրի միջոցների մնացորդը ծրագրի ավարտին կազմել է 0 ՀՀ դրամ:
- Բյուջեով հաստատված գումարը ամբողջ ժամանակաշրջանի համար կազմում է 36,104,633 ՀՀ դրամ: Փաստացի կատարված և հաստուցված ծախսերը կազմում են՝ 32,105,000 ՀՀ դրամ:
- Մեր կողմից ստուգված ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 32,105,000 ՀՀ դրամ, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Ծախսերի ծածկույթի ընդհանուր գործակիցը կազմում է 100 %:
- Միջոցները օգտագործվել են նպատակային և արդյունավետ:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպության միջև գործընկերային պայմանագրային պարտավորությունները պահպանվել են:

2022 թվականի հունվարի 01-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված

| *ՀՀ դրամով* | Փաստացի ծախսերի գումարը | Ստուգված ծախսերի գումարը | Մասնաբաժինը ծախսերում |
|---|---|---|---|
| 1. Վարչական անձնակազմ | 4,624,285 | 4,624,285 | 100% |
| 2. Ծրագրի իրականացում | 15,607,800 | 15,607,800 | 100% |
| 3. Այլ ծախսեր | 9,963,042 | 9,963,042 | 100% |
| 4. Գործառնական ծախսեր | 1,863,873 | 1,863,873 | 100% |
| 5. Բուժծառայություններ և այլն | 46,000 | 46,000 | 100% |
| Ընդամենը | **32,105,000** | **32,105,000** | 100% |

## 4. ԾՐԱԳՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

«Ամերիաբանկ» ՓԲԸ 1570005312180300 ՀՀ դրամ.

Մենք ստուգել ենք ընկերության բանկային հաշվի բոլոր դեբետային և կրեդիտային գրանցումները՝ համեմատելով դրանք բանկային քաղվածքների հետ: Անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Սույն ծրագրի շրջանակում «Դեմոկրատիան Այսօր» Հասարակական Կազմակերպությունը իրեն սպասարկող կամ այլ բանկերում առանձին սպասարկման հաշվարկային հաշիվ չի բացել, սական այն հաշվապահական հաշվառման վարելուն չի խոչընդոտել:

Կանխիկ գործարքները հիմնավորված էին դրամարկղային ելքի փաստաթղթերով:

Ծախսերի և մուտքերի նախնական փաստաթղթերի ստուգման արդյունքում որևէ խախտում չենք հայտնաբերել:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 16.09.2023 15:45